Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունվարի 25-ի N 113 - Ն որոշման

ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺՈՎ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՏՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆԿԱՆԽԵԼԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՐԿԻ ԿԱՄ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՋԱՅԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՉԱՓԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

1. Սույն կարգով կարգավորվում են անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 58-րդ գլխի համաձայն Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատությունների՝ մինչև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց գրանցման պահն ընկած ժամանակահատվածում ներառված հաշվետու ժամանակաշրջանների համար հարկի կամ հարկման բազայի նվազեցման կարգի, չափերի և ժամանակահատվածի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը կիրառվում է օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատությունների նկատմամբ (որոնց հաշվառած հիմնադիրների գործունեությունը կասեցվել, դադարեցվել կամ անհնարին է դարձել)՝

1) ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գծով պարտավորությունների հաշվարկման համար՝ 2023 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց գրանցման պահը, բայց ոչ ուշ, քան 2024 թվականի հունվարի

31-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար ավելացված արժեքի հարկի հաշվարկման նպատակով.

2) շահութահարկի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման համար՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց գրանցման պահը, բայց ոչ ուշ, քան 2024 թվականի հունվարի 31-ը ներառող ժամանակահատվածների համար շահութահարկի հաշվարկման նպատակով:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված մշտական հաստատությունները Հայաստանի Հանրապետությունում իրականացված գործունեության արդյունքներով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների) մատակարարման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները կարող են նվազեցնել սույն կարգի 4-րդ կամ 5-րդ կետով սահմանված՝ հաշվարկված ԱԱՀ-ից նվազեցման ենթակա գումարի չափով: Հաշվարկված ԱԱՀ-ից նվազեցման ենթակա գումարներն արտացոլվում են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում:

4. Հաշվարկված ԱԱՀ-ից նվազեցման ենթակա գումարը որոշվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների) մատակարարման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարի 50 տոկոսի չափով, եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանում չի ունեցել այդ գործարքներին վերագրվող ձեռքբերումների մասով հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներ (անկախ հաշվանցման (պակասեցման) իրավունք ձեռք բերված լինելու հանգամանքից)՝ հաշվի առնելով սույն կարգի 6-րդ կետով սահմանված դրույթը:

5. Հաշվարկված ԱԱՀ-ից նվազեցման ենթակա գումարը որոշվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ապրանքների (բացառությամբ

հիմնական միջոցների) մատակարարման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարի 50 տոկոսի և այդ գործարքներին վերագրվող ձեռքբերումների մասով հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների (անկախ հաշվանցման (պակասեցման) իրավունք ձեռք բերված լինելու հանգամանքից) դրական տարբերության չափով, եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ունեցել է այդ գործարքներին վերագրվող ձեռքբերումների մասով հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներ (անկախ հաշվանցման (պակասեցման) իրավունք ձեռք բերված լինելու հանգամանքից)՝ հաշվի առնելով սույն կարգի 6-րդ կետով սահմանված դրույթը:

6. Սույն կարգի 4-րդ և 5-րդ կետերով որոշվող հաշվարկված ԱԱՀ-ից նվազեցման ենթակա գումարների հանրագումարը՝

1) չի կարող գերազանցել մշտական հաստատության 2023 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ապրանքային մնացորդի (բացառությամբ հիմնական միջոցների) արժեքի 20 տոկոսը.

2) որոշելիս հաշվի չեն առնվում մշտական հաստատության 2023 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հիմնական միջոցների արժեքները:

7. Սույն կարգի 2-րդ կետում նշված մշտական հաստատությունների շահութահարկով հարկման բազան որոշելիս օրենսգրքով սահմանված կարգով համախառն եկամտից կարող են նվազեցվել օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով չհիմնավորված՝ օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումները (այսուհետ՝ նվազեցումներ) հետևյալ կերպ՝

1) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման հետ կապված նվազեցումները ենթակա են նվազեցման համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման դիմաց ստացվող եկամտի 70 տոկոսի չափով, եթե առկա չեն օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ

մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված նվազեցումներ՝ հաշվի առնելով սույն կարգի 8-րդ կետով սահմանված դրույթը.

2) ծառայությունների մատուցման հետ կապված նվազեցումները ենթակա են նվազեցման համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման դիմաց ստացվող եկամտի 40 տոկոսի չափով, եթե առկա չեն օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված նվազեցումներ՝ հաշվի առնելով սույն կարգի 8-րդ կետով սահմանված դրույթը.

3) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման հետ կապված նվազեցումները ենթակա են նվազեցման համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման դիմաց ստացվող եկամտի 70 տոկոսի և մշտական հաստատության կողմից կատարված՝ օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված նվազեցումների դրական տարբերության չափով, եթե առկա են օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված նվազեցումներ՝ հաշվի առնելով սույն կարգի 8-րդ կետով սահմանված դրույթը.

4) ծառայությունների մատուցման հետ կապված նվազեցումները ենթակա են նվազեցման համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման դիմաց ստացվող եկամտի 40 տոկոսի և մշտական հաստատության կողմից կատարված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված նվազեցումների դրական տարբերության չափով, եթե առկա են օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված նվազեցումներ՝ հաշվի առնելով սույն կարգի 8-րդ կետով սահմանված դրույթը։

8. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված վարչական ծախսերը, իրացման ծախսերը, ֆինանսական ծախսերը և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերը եթե ուղղակիորեն հնարավոր չէ վերագրել ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքներին, ապա դրանց վերագրումն իրականացվում է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքներին վերագրելի համախառն եկամտի մեջ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների դիմաց ստացվող եկամտի տեսակարար կշռին համապատասխան:

9. Սույն կարգով սահմանված հարկային արտոնություններից օգտվելու համար մշտական հաստատությունը մինչև 2024 թվականի հունիսի 30-ը արտոնությունից օգտվելու յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար թղթային եղանակով հարկային մարմին է ներկայացնում դիմում՝ սույն կարգի N 1 ձևին համապատասխան:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետում՝ մշտական հաստատության կողմից սույն կարգով սահմանված հարկային արտոնություններից օգտվելու նպատակով՝ նույն հաշվետու ժամանակաշրջանի համար մեկից ավելի դիմում ներկայացնելու դեպքում արտոնության կիրառման նպատակով հիմք է ընդունվում վերջին ներկայացված դիմումում նշված արտոնության գումարը:

Ձև N 1

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մշտական հաստատությունը անվանումը									
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)									
3. Մշտական հաստատության գտնվելու վայրը									
4. Դիմումի ներկայացման ամսաթիվը									թ.

5. Հայտնում եմ, որ ցանկանում եմ օգտվել անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված հարկի կամ հարկման բազայի նվազեցման՝ կարգով սահմանված հետևյալ արտոնություններից՝	
1) 20 թ. _____ ժամանակաշրջանում հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից նվազեցման մասով (դրամ)	
2) 20 թ. _____ ժամանակաշրջանում շահութահարկով հարկման բազայի որոշման համար համախառն եկամուտից կատարվող նվազեցումների մասով (դրամ)	

Պաշտոնատար անձ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ